12355

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 04 » 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0189-21

Ձեռնարկողը՝ ***«Արտքոմփանի» ՍՊ ընկերություն***
ք.Երևան, Պռոշյան 2/1, 18 փարածք

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի, Արաբկիր վարչական շրջանի Աղբյուր Սերերոբ փողոցի 44-48 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան, Աղբյուր Սերոբ հ. 44-48

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0189-21

<04> 10 2021թ.

«Արտքոմփանի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արաբկիր վարչական շրջանի Աղբյուր Սերոբ 44-48 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Արտքոմփանի» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Աղբյուր Սերոբ փողոց հ. 44-48

Ներածական մաս. Համաձայն ՀՀ-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի, 1500 ք.մ և բարձր կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի կառույցներն ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, դասակարգվում են «Գ» կատեգորիայի:

Նախագծվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 3769.80 ք.մ, ուստի սույն նախագիծը և նախատեսվող գործունեությունը պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցությունների նախնական գնահատման հայտի պետական փորձաքննության և փորձագիտական եզրակացության ձեռք բերում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել Արաբկիր վարչական շրջանի Աղբյուր Սերոբ փողոցի 44-46 հասցեում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է «Արտքոմփանի» ՍՊԸ-ն: Նախագիծը մշակվել է ՀՀ գործող շինարարական նորմատիվային պահանջների, և նախագծային աշխատանքների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի

համաձայն: Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից բազմաբնակարան բնակելի շենք:

Նկարագրական մաս. Բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Արաբկիր վարչական շրջան, Աղբյուր Սերոբ փողոցի 44-46 հասցեում (Արաբկիր վարչական շրջան, Աղբյուր Սերոբի փողոց 44-48 հողամասեր ըստ ներկայացվող վկայականների հասցեներով): Բազմաբնակարան բնակելի շենքը նախատեսված է կառուցել 6 մասնաշենքերով, իրարից առանձնացված դեֆորմացիոն կարերով, 14 վերգետնյա հարկերով վերին հատակագծային նիշից և 4 կիսանկուղային հարկերով: Հաշվի առնելով տեղանքի ռելիեֆային յուրահատկությունները հնարավորություն է ստեղծվում ստանալ 4 նկուղային /կիսանկուղային/ հարկեր: Շենքի 4-րդ հարկում նախատեսված է սպասարկման, տեխնիկական, օժանդակ և այլ կարիքների համար տարածքներ, սենյակներ: Կից գտնվում են բնակելի տներ, բազմաբնակարան բնակելի շենքեր:

Այս նախագծի շրջանակում նախատեսվում է ստանալ հարմարավետ միջավայր բնակչի հանգստի, սպորտի կենցաղի, բնակության համար: Ներքին բակում նախատեսված է հանգստի կանաչ գոտի, լողավազան, սպորտային հրապարակ /բասկետբոլ, մինի ֆուտբոլ/, նստարաններ, մանկական խաղահրապարակ, տաղավարներ, արտաքին լուսավորություն: Առաջին հարկում նախատեսված է բնակելի շենքի գլխավոր մուտքերը և հասարակական սպասարկման տարածքները, ֆիտնես կենտրոններ, սպորտային խմբակներ, որոնց համար առանձնացված են առանձին մուտքեր: 2-ից 14-րդ հարկում նախատեսված են բնակարաններ:

Տարածքի վերին հատվածային նիշում, Աղբյուր Սերոբ փողոցի շարունակությամբ տեղակայված է հասարակական շինություն 2 ստորգետնյա հարկերով, որոնք նախատեսվում են որպես ավտոկայանատեղի ընդհանուր համալիրի կարիքների համար:

Որպես հիմնական հետիոտն մուտք նախատեսված է հողամասի վերին հատվածից Աղբյուր Սերոբ փողոցի կողմից, որը հնարավորություն կստեղծի շարունակել փողոցի մայթը դեպի շենքի մուտքը: Որպես հիմնական տրանսպորտային մուտք նախատեսվում է Սարալանջ փողոցի կողմից ներբակային ճանապարհով հողամասի ստորին նախագծային նիշով: Ինչպես նաև հնարավորություն է ստեղծվում թեքուղու տեսքով շրջանցիկ պահել վերին և ստորին հատվածները, այսինքն մեքենան հնարավորություն կունենա երկկողմանի երթևեկությամբ դուրս գալ թե վերին հատված դեպի Աղբյուր Սերոբի փողոց, թե ստորին մասով ներբակային ճանապարհով դուրս գալ Սարալանջ փողոց:

Շինության ընդհանուր հողի մակերեսը կազմում է 9440.96ք.մ (100%), կանաչապատման մակերեսը՝4435.79ք.մ (46.98%), շինությունների մակերեսը՝ 3769.80 (39.93%), բարեկարգվող տարածքների, մայթերի, մուտքերի մակերեսները՝ 1235.52ք.մ (13.09%):

Բնակարանների քանակը՝ 226 հատ, ստորգետնյա ավտոկայանատեղի՝ 185 հատ, վերգետնյա ավտոկայանատեղի՝ 36 հատ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Յուրաքանչյուր մասնաշենքում հարկերը հաղորդակցվում են ներքին աստիճանավանդակներով և երկու վերելակներով: Տանիքը նախատեսվում է հարթ, ջրահեռացումը՝ կազմակերպված ներքին ցանցով: Բազմաֆունկցիոնալ շենքի բնակելի մասի խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարով, որոնք բարձրանում են հորանի մեջ: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են 60% ջերմության խնայողություն:

Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր:

Տարածքում նախատեսվում է տնկել.

- թխկի կարմիր՝ 12 հատ,
- լաբորնում՝ 2 հատ,
- գնդաձև իլենի՝ 22 հատ,
- ասպիրակ՝ 15 հատ,
- խենոմելես՝ 10հատ,
- կատալպա՝ 6հատ,
- ձիակասկ՝ 5 հատ:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 550 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ, իսկ կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են նախագծվող բնակելի համալիրի շինարարական աշխատանքերի ընթացքում, մասնավորապես, գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շին-գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով նախատեսվող գործունեության տեղամասը:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ որոնք են՝ փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում, փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում, վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_2):

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝ շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,

շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում, որը կիրականցվի փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան, որը իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500ք.մ մակերեսով տարածքի վրա:

Աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքները կմաքրվեն և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

Երեկոյան ժամերին կդադարեցվի աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար կստուգվի և կկարգավորվի տեխնիկական միջոցները և ավտոտրանսպորտի շարժիչները, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն կդարձվի դրանց աղմուկի մակարդակին:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից և վերոնշյալ ռիսկերից խուսափելու նպատակով շինարարական տեղամասում պարբերաբար կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, կանցնեն հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, հրահանգավորումը կիրականացնի աշխատանքների ղեկավարը,
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում),
- մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները կհագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն կանցնեն դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորումներ,
- հեղուկ նյութերը կտեղափոխվեն շինարարական հարթակ օգտագործումից առաջ և կպահվեն հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- բոլոր աշխատողներին կտրվեն անհատական պաշտպանության միջոցներ,
- հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերվի առաջին բուժ.օգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը,
- մշտապես կիրականացվի շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները միշտ ազատ կլինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով կտեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ, շինարարական աշխատանքների տեղամասերում կտեղադրվեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, կփակցվեն հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կպահպանվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնները և նորմերի պահանջները:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները կկատարվեն պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս կիրականցվի Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթները, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կկրի անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Շինհրապարակում և հարակից տարածքներում մոնիթորինգի իրականացումը հնարավորություն կտա հսկելու շինարարական աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի, կամ հարակից տարածքների վրա՝ վնասակար ազդեցությունների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության հետևողականություն տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 1.960000 դրամ:

Նախատեսվում է իրականացնել նաև մթնոլորտային օդի որակի, աղմուկի, թրթռման, հողային ծածկույթի մշտադիտարկումներ:

Շինարարական աշխատանքները կատարվելու է պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի»

նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», Երևանի Աջափնյակ վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Արաբկիր վարչական շրջանի Աղբյուր Սերոբ փողոցի 44-48 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
3. Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումները իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2018 N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:

Շինարարության ընթացքում և աշխատանքների ավարտից հետո, որպես պարտադիր պահանջ անհրաժեշտ է՝

- շինհրապարակի տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, ապահովել լուսավորությամբ, տեղադրել մուտք գործող արգելող նշաններ,
- ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել, հնարավորինս բերելով սկզբնական վիճակի,
- ամբողջ շինարարական աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շին հրապարակից,
- շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով,
- շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից չի առաջանա ջրի արտահոսք,

- շինհրապարակից ելքի ժամանակ անհրաժեշտ է տեխնիկական միջոցների անվադողերի լվացում,
- տարածքի կանաչապատման աշխատանքները իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից հաստատված կանաչապատման նախագծի,
- ապահովել ծառերի և թփերի 90% կպչողականություն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը, կանաչապատումը իրականցնել տարածի բնակալիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային տեսակներով:

Հաշվետվությունում առկա առաջարկվող միջոցառումները ընդունել պարտադիր կատարման ենթակա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արաբկիր վարչական շրջանի Աղբյուր Սերոբ փողոցի 44-48 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման նախագծի, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ն. Նասիբյան

Ընդամենը՝ 7 էջ